ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/80

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Արտաշատի համայնքապետարան
Բողոք բերող՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա. Պարանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով հրատապ բաց մրցույթ, Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 23, Արազի փողոցի թիվ 39, Շահումյան փողոցի թիվ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 10.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Տ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի և «Ուսպեխ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 13.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/80 համարի ծածկագիրը:

23.09.2021թ.-ին, 01.10.2021թ.-ին և 11.10.2021թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 01.10.2021թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 11.10.2021թ.-ին:

2. <u>«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն 10.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Արտաշատ համայնքի կարիքների համար՝ Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 23 , Արազի փողոցի թիվ 39 , Շահումյան փողոցի թիվ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/37 հրատապ բաց մրցույթ /այսուհետև նաև՝ Ընթացակարգ/:

Վերը նշված ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ /կոնսորցիում/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2021թ. ծանուցման համաձայն՝ Ընթացակարգով «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում կան

անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանումն ընդամենը գներին, թիվ 3-րդ կշռի երկրորդ տողում կան թվաբանական սխալներ, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին կան թվաբանական սխալներ, թիվ 6-րդ կշռի 11-րդ տողում կան թվաբանական սխալներ /ընդամենը գինը հաշվարկված չէ հազար դրամով/, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա, սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առանց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, ոևը ևս չի համապատասխանում հրավերի պահնաջներին:

www.gnumner.am կայքում հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.09.2021թ. թիվ 3 արձանագրության 1.4 կետի համաձայն՝ «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ չի շտկել անհամապատասխանությունները: Մասնավորապես ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գնին:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը գնահատել անբավարար և մերժել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Ինչպես արդեն նշել ենք, Արտաշատ համայնքի կարիքների համար՝ Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 23 , Արազի փողոցի թիվ 39 , Շահումյան փողոցի թիվ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37 հրատապ բաց մրցույթով

մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ /կոնսորցիում/:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.09.2021թ. ծանուցման համաձայն՝ Ընթացակարգով «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում կան անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանումն ընդամենը գներին, թիվ 3-րդ կշռի երկրորդ տողում կան թվաբանական սխալներ, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին կան թվաբանական սխալներ, թիվ 6-րդ կշռի 11-րդ տողում կան թվաբանական սխալներ /ընդամենը գինը հաշվարկված չէ հազար դրամով/, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա, սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առանց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, ոևը ևս չի համապատասխանում հրավերի պահնաջներին:

www.gnumner.am կայքում հրապարակված Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.09.2021թ. թիվ 3 արձանագրության 1.4 կետի համաձայն՝«ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ չի շտկել անհամապատասխա-նությունները: Մասնավորապես ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գնին:

Արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի /կոնսորցիում/ հայտը գնահատել անբավարար և մերժել:

Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21/37 հրատապ բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ /կոնսորցիում/ հայտը անբավարար գնահատելով և մերժելով վերջինիս հայտը ՝ խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով երաշխավորված մասնակցության իրավունքի սահմանափակմանը:

Մասնավորապես՝ «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ /կոնսորցիում/ կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվով թույլ տրված շեղումները եղել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, այն է՝ օրենսդրությամբ սահմանված թույլատրելի շեղում թույլ տալու հնարավորության շրջանակներում:

Գնահատող հանձնաժողովի կողմից անտեսվել է վերը նշված փաստական հանգամանքը և որոշում է կայացվել «ԿՌ ՊՐՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ /կոնսորցիում/ հայտը գնահատել անբավարար և մերժել:»:

Ելնելով վերոգրյալից՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել «ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի և «Ուսպեխ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

Ընկերությունը 04.10.2021թ.-ին ներկայացրած բողոքի լրացմամբ, հավելել է հետևյալը.

«Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ, ի լրումն <<ԿՌ Պրոջեկտս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերի և ի պատասխան Արտաշատի համայնքապետարանի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/80 ծածկագրով բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշման, հայտնում ենք՝

Ընթացակարգի Հրավերի 2 մասի 2.6 կետում սահմանված է՝

- իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Ուսումնասիրելով Պատվիրատուի դիրքորոշումը պարզ է դառնում, որ մերժման հիմքը հանդիսացել է այն հանգամանքը, որ շտկման արդյունքում ՍՊԸ-ի կողմից չի փոփոխվել բաժիններով սահմանված տոկոսները:

Մինչդեռ շտկման արդյունքում ներկայացված թվերը համապատասխանում են պահանջներին, սակայն տոկոսային առումով ձևական փոփոխության չի ենթարկվել /քանի որ թույլատրելի շեղման մեջ է/, որը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ որևէ պարտադիր պահանջ չի նախատեսում /ըստ էության այն գնային առաջարկի մեջ որևէ բան չի փոխում և որ ամենակարևորն է շեղումը թույլատրելի նորմայի մեջ է/:

Այս պարագայում խոսքը չի գնում, որ նախապես հրապարակված կշիռները կարող են փոփոխվել, խոսքը գնում է որ գումարի շեղումը սահմանված կշռից չպետք է ավել կամ

պակաս լինի սահմանված կշռի տաս տոկոսից: Իսկ մեր շտկած ծավալաթերթում բաժինների ընդհանուր արժեքի շեղումը չի գերազանցում 10 տոկոսը:

Տոկոսները կիրառվել են առանց ԱԱՀ և չնախատեսված աշխատանքների գումարի վրա 56 650 246 ՀՀ Դրամ

1-ին բաժնով սահմանված է 1,59271298 %, որը կազմում է 902275.821243 ՀՀ դրամ

Մեր առաջարկած գինը 903.310, շեղումը կազմում է 834.178757 ՀՀ դրամ որը չի գերազանցում թույլատրված 10 տոկոսը:

2-րդ բաժնով սահմանված է 17.98942798 % որը կազմում է 10191055.2046 ՀՀ դրամ

Մեր առաջարկած գինը 10194380, շեղումը կազմում է 3324.7954 ՀՀ դրամ, որը չի գերազանցում թույլատրված 10 տոկոսը:

3-րդ բաժնով սահմանված է 5.19048671 %, որը կազմում է 2940423.48981 ՀՀ դրամ

Մեր առաջարկած գինը 2979349, շեղումը կազմում է 38925.51019 որը չի գերազանցում թույլատրված 10 տոկոսը:

4-րդ բաժնով սահմանված է 45.03717209 %, որը կազմում է 25513668.7804 ՀՀ դրամ

Մեր առաջարկած գինը 25581750 շեղումը կազմում է 68081.2196 որը չի գերազանցում թույլատրված 10 տոկոսը:

5-րդ բաժնով սահմանված է 2.67052797 %, որը կազմում է 1512860.6645 ՀՀ դրամ

Մեր առաջարկած գինը 1507630, շեղումը կազմում է 5230.6645 ՀՀ դրամ որը չի գերազանցում թույլատրված 10 տոկոսը:

6-րդ բաժնով սահմանված է 27.51966886 %, որը կազմում է 15589960.1075 ՀՀ դրամ

Մեր առաջարկած գինը 15479027 շեղումը կազմում է 110933.1075 ՀՀ դրամ որը չի գերազանցում թույլատրված 10 տոկոսը:

Այդպիսով մեր շտկած ծավալաթերթի բոլոր կշիռների շեղումները թույլատրված շեմի մեջ են, և մասնակիցը օրենքով չունի որևէ պարտավորություն պատվիրատուի հրապարակած կշիռները փոփոխելու, օրենքը պահանջում է որպեսզի տվյալ բաժնի համար շեղումը չգերազանցի 10 տոկոսը, և մեր շտկած ծավալաթերթում այն չի գերազանցում:

Պատվիրատուն ուզում է, օրինակ առաջին բաժնի համար սահմանած է 1,59271298 %:

Մեր առաջարկած գնի տոկոսը կազմում է 1.59453853 %: Նրա հրավերով սահմանված կշիռը փոփոխենք գրենք մեր ստացած տոկոսը: Որը օրենքով ամրագրված չէ նման պարտավորություն:

Պրակտիկայում չկա այդպիսի դեպք, երբ մասնակցին մերժեն սահմանված կշիռը չփոփոխելու համար, քանի որ այդպիսի պարտավորություն ոչ մի օրենսդրական կարգավորմամբ ամրագրված չէ:

Վերը նշված փաստը հիմնավորելու համար՝ բողոքներ քննող անձին՝ սույն լրացման հետ միասին ուղարկում ենք նաև մի քանի նմանատիպ գործեր, որոնց հայտերը կազմվել են նույնատիպ, նույն հաշվարկներով՝ որոնք գնահատող հանձնաժողովների կողմից գնահատվել են բավարար:»:

3. <u>Արտաշատի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 13.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14803-2021 գրությամբ դիմել է Արտաշատի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 10.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 17.09.2021թ.-ին թիվ 025/888 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնման ընթացակարգի նկարագրությունը և ընթացքը

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար 2021 թվականի օգոստոսի 06 –ին հայտարարվել է ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները '

Մասնակցի /ների/				
N	*անվանումը*	*հասցե*	*Հեռախոսահամարը*	*էլեկտրոնային փոստի հասցե*

1	«ԿՌ ՊՌՈՋԵԿՏ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ	Արարատի մարզ գ.Մխչյան Շահումյան փ. տուն 23 Արարատի մարզ գ.Մխչյան 3-րդ փողոց տուն 7	077 19 89 89 095 33 33 66	karenghazaryan 1989@gmail.c uspex-14@mail.ru
2	«ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ	Ք.Երևան Նուբարաշեն 9փ. տուն 20	093 73 36 10	davitshin@bk.ru
3	«Զեթ Պրոֆիլ» ՍՊԸ	Ք.Արտաշատ Մարքսի 83	093 80 55 95	zet-profil@mail.ru
4	«Արտդիանշին» ՍՊԸ	Ք.Արարատ Գրիբայեդովի 24	098 65 00 98	artdianshin@inbox.ru
5	«Օրիոն 7» ՍՊԸ	Ք.Երևան Մամիկոնյանց 27շ. բն.126	043 63 78 77	orionmail16@gnail.com
6	«Արարատշին» ՍՊԸ	Ք.Արարատ Խանջյան 12	091 56 45 45	araratshin@inbox.ru
7	«Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ	Ք.Երևան Ուլնեցու 31	055 90 70 70	avetisyanshin@mail.ru

Հայտերի բացման և գնահատման գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ հայտնաբերվել են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ:

1 <<ԿՌ ՊՌՈՋԵԿՏ>> ՍՊԸ և <<Ուսպեխ>> ՍՊԸ–ի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ – ծավալաթերթ-նախահաշվի :

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, թիվ 3-րդ կշռի թիվ երկրորդ տողում կան թվաբանական սխալներ, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին կան թվաբանական սխալներ, թիվ 6-րդ կշռի 11-րդ տողում կան թվաբանական սխալներ /ընդամենը գինը հաշվարկված չէ հազար դրամով/, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առնաց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին:

2 «ԴԱՎԻԹՇԻՆ ՍՊԸի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ – ծավալաթերթ-նախահաշվի:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր տողերում կան թվաբանական սխալներ ընդամենը գների մեջ, նշված չեն կշիռները, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին :

3 Զեթ Պրոֆիլ ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ-ծավալաթերթ-նախահաշվի:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, թիվ 1-ին կշռի 2-րդ տողում կան թվաբանական սխալներ ընդամենը գնի մեջ, թիվ 3-րդ կշռի թիվ 2 տողում կան թվաբանական սխալ ընդամենը գնի մեջ, թիվ 5-րդ կշռի թիվ 2 տողում կան թվաբանական սխալ ընդամենը գնի մեջ, թիվ 6-րդ կշռի 7-րդ, 16 րդ տողում կան թվաբանական սխալներ ընդամենը գների մեջ:

Մասնակիցը հրավերով պահանջվող հավելված 1,2 –ը չի կցել համակարգի համապատասխան դաշտում այլ կցել է հավելված 1-ի հետ:

4 Արտդիանշին ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ-ծավալաթերթ-նախահաշվի:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին:

5 «Օրիոն 7 ՍՊԸ ի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ – ծավալաթերթ-նախահաշվի:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի կշիռները նշված չեն, բոլոր տողերում առկա են թվաբանական սխալներ, բացառությամբ 2-րդ կռի 5-րդ, 15-րդ, տողում, թիվ 4 –դ կշռի 16-րդ տողում և թիվ 6-րդ կշռի 16-րդ տողից:

6 «Արարատշին ՍՊԸի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ – ծավալաթերթ-նախահաշվի:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի թիվ 2, 4, 6-րդ կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, կան թվաբանական սխալներ:

7 Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ – ծավալաթերթ-նախահաշվի:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, կան թվաբանական սխալներ, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առնաց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերով

պահանջվող հավելված 1,2 –ը չի կցել համակարգի համապատասխան դաշտում այլ կցել է հավելված 1-ի հետ:

Մասնակիցը հրավերով պահանջվող հավելված 1,2 –ը չի կցել համակարգի համապատասխան դաշտում այլ կցել է հավելված 1-ի հետ:

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության թիվ 1 որոշմամաբ կասեցվել է գնահատող հանձնաժողովի նիստը և մասնակիցներին մասնակիցների ոչ ավտոմատ ծանուցմամբ/ www.armeps.am / համակարգի միջոցով պատշաճ տեղեկացվել է հայտերում առկա անհամապատասխանությունների մասին:

Սույն թվականի սեպտեմբերի 02-ին գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է հայտերի շտկման տեղեկատվության մասին:

1,1 Արարատշին ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունները:

1.2 Զեթ-Պրոֆիլ ՍՊԸ-ն շտկել է անհամապատասխանությունները :

1.3 «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ չի շտկել անհամապատասխանությունները : Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին:

1.4 ԿՌ ՊՌՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի կոնցոսումը չի շտկել անհամապատասխանությունները : Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին:

1.5 «Արտդիանշին» ՍՊԸ- չի շտկել անհամապատասխանությունները: Մինչև գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը մասնակիցը չի ներկայացրել շտկված ծավալաթերթ-նախահավի շտկված տարբերակը:

1.6 «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ չի շտկել անհամապատասխանությունները: Մինչև գնահատող հանձնաժողովի նիստի կասեցման ավարտը մասնակիցը չի ներկայացրել շտկված ծավալաթերթ-նախահավի շտկված տարբերակը:

1.7 «Օրիոն 7» ՍՊԸ –ն շտկել է անհամապատասխանությունները:

Գնահատող հանձնաժողովը սույն թվականի թիվ 3 արձանագրությամբ կայացրել է հետևյալ որոշումները՝

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի երկրորդ պարբերությունը «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

2. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի երկրորդ պարբերությունը ԿՌ

ՊՌՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի կոնցոսումը -ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

3. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի երկրորդ պարբերությունը «Արտդիանշին» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

4. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի երկրորդ պարբերությունը «ԴԱՎԻԹՇԻՆ» ՍՊԸ -ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

5. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը «Օրիոն 7» ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար :

6. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Զեթ-Պրոֆիլ ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար :

7. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 42-րդ կետի առաջին պարբերությունը Արարատշին ՍՊԸ -ի հայտը գնահատել բավարար :

8. Քանի որ գնման ընթացակարգը կազմակերպվել է Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ ենթակետով ՝ ապա Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետով իրականացնել բանակցություններ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով :

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ) պարբերությամբ բանակցությունների վարման օրվա, ժամի և վայր սահմանել ըստ աղյուսակ 1 – ի

Աղյուսակ թիվ 1

Հ/Հ	Վարման օր	Ժամը	վայր
1	07.09.2021թ	10-00	Ք.Արտաշատ Օգոստոսի 23/62 , Արտաշատի համայնքապետարան 4-րդ հարկ 2-րդ սենյակ

Գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագության թիվ 1 որոշմամաբ ընտրված մասնակից է ճանաչվել Օրիոն 7 ՍՊԸ-ն:

- *<<ԿՌ ՊՌՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ-ի կոնցոսում հայտի շտկման և մերժման մասին /մանրամասն/*

Արտաշատի համայնքապետարանի կարիքների համար հայտարարված ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37 ծածկագրով հրատապ բաց մրցույթի ընթացակարգ հրավերի 2-րդ մասի 2,6 կետով սահմանված է որ մասնակիցը ներկայացնում է՝ - իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել.

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունները՝

1. ԿՌ ՊՌՈՋԵԿՏՍ ՍՊԸ և Ուսպեխ ՍՊԸ–ի կողմից կազմված հայտը և ներկայացնումը համապատասխան է հրավերի պահանջներին: բացառությամբ – ծավալաթերթ-նախահաշվի :

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, թիվ 3-րդ կշռի թիվ երկրորդ տողում կան թվաբանական սխալներ, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին կան թվաբանական սխալներ, թիվ 6-րդ կշռի 11-րդ տողում կան թվաբանական սխալներ /ընդամենը գինը հաշվարկված չէ հազար դրամով/, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առանց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին:

1.1 Մասնակցի կողմից ներկայացված կշիռներ՝

- *Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի ընդամենը գինը որի վրա է կիրառված կշիռը՝ 100%-ը կազմում է 57500000/ հիսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի առաջին կշռի ընդամենը գինը հավասար է 915710 /ինը հարյուր տասնհինգ հազար յոթ հարյուր տաս / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*57500000 * 1,59271298% =915809 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված փվյալ բաժնի կշռի գումաը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 99 /ինսունինը/ ՀՀ դրամի անճշտություն:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի երկրորդ կշռի ընդամենը գինը հավասար է 10343780 /տաս միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար յոթ հարյուր ութսուն / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*57500000 * 17,98942798% =10343921 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված փվյալ բաժնի կշռի գումաը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 141 /մեկ հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամի անճշտություն:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի երրորդ կշռի ընդամենը գինը հավասար է 2985519 /երկու միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր տասնինը / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*57500000 * 5,19048671% =2984529 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված փվյալ բաժնի կշռի գումաը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 990 /ինը հարյուր ինսուն/ ՀՀ դրամի անճշտություն:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի չորրորդ կշռի ընդամենը գինը հավասար է 25953750 /քսանհինգ միլիոն ինը հարյուր հիսուներեք հազար յոթ հարյուր հիսուն / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*57500000 * 45,03717209% =25896373 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված փվյալ բաժնի կշռի գումաը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 57377 /հիսունյոթ հազար երեք հարյուր յոթանասունյոթ/ ՀՀ դրամի անճշտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի հինգերորդ կշռի ընդամենը գինը հավասար է 1512630 /մեկ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար վեց հարյուր երեսուն / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*57500000 * 2,67052797% =1535553 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 22923 /քսաներկու հազար ինը հարյուր քսաներք/ ՀՀ դրամի անճշտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի վեցերորդ կշռի ընդամենը գինը հավասար է 15788611 /տասնհինգ միլիոն յոթ հարյուր ութսունութ հազար վեց հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*57500000 * 27,51966886% =15823809 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 35198 /երեսունհինգ հազար մեկ հարյուր ինսունութ/ ՀՀ դրամի անճշտություն/:

Մասնակցի կողմից ներկայացված , թիվ 3-րդ կշռի թիվ երկրորդ տողում կան թվաբանական սխալներ՝

մասնակիցը թիվ 3 կշռի երկրորդ տողի բազմապատկումը կատարել է հետևյալ կերպ՝

33,49մ3 1,0 = 334.900 ՀՀ դրամ*

*սակայն պետք էր ստանար 33,49մ3 *1,0 = 34,490 ՀՀ դրամ:*

Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի թիվ 6-րդ կշռի թիվ 11-րդ տողում կան թվաբանական սխալներ՝

մասնակիցը գումարը չի նշել հազար դրամներով

*6,00*հատ * 50,285166 = 301711 ՀՀ դրամ*

Մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առնաց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի թիվ 2 արձանագրության թիվ 1 որոշմամբ «ԿՈ ՊՈՈՋԵԿՏՍ» ՍՊԸ և «Ուսպեխ» ՍՊԸ կոնցոսիումին տրվել է մեկ աշխատանքային օր շտկելու անհամապատասխանությունները և ոչ ավտոմատ ծանուցմամբ/ www.armeps.am / համակարգի միջոցով պատշաճ տեղեկացվել է հայտերում առկա անհամապատասխանությունների մասին:

Մասնակիցը մինչև գնահատող հանձնաժողովի նիստի ավարտը ներկայացրել է ներկայացրած հայտի շտկված տարբերակը որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջների:

Մասանվորապես ՝

- *մասնակիցը շփկել է թիվ 3-րդ կշռի բազմապատկումը , թվաբանական սխալը*
- *մասնակիցը շփկել է ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի թիվ 6-րդ կշռի թիվ 11-րդ տողի ընդամենը գինը /գինը գրել է հազար դրամներով/*
- *մասնակիցը 1,5 % չնախատեսված աշխատանքների գումարը տարանաջատել է ընդամենը գնից: /100% կշռից/*
- *մասնակիցը չի շփկել կշիռները , ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին:*

Մասնավորապես՝

- *Մասնակցի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվի ընդամենը գինը որի վրա է կիրառված կշիռը՝ 100%-ը կազմում է 56650246/ հիսունվեց միլիոն վեց հարյուր հիսուն հազար երկու հարյուր քառասունվեց / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի առաջին կշռի ընդամենը գինը հավասար է 903110 /ինը հարյուր երեք հազար մեկ հարյուր տաս / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է ՝*

*56650246 * 1,59271298% =902275 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 835 /ութ հարյուր երեսունհինգ / ՀՀ դրամի անճտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի երկրորդ կշռի ընդամենը գինը հավասար է 10194380 /տաս միլիոն մեկ հարյուր ինսունչորս հազար երեք հարյուր ութսուն / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է ՝*

*56650246 * 17,98942798% =10191055 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 3325 /երեք հազար երեք հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամի անճշտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի երրորդ կշռի ընդամենը գինը հավասար է 2985519 /երկու միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր տասնինը / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է ՝*

*56650246 * 5,19048671% =2984529 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 990 /ինը հարյուր ինսուն/ ՀՀ դրամի անճշտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի չորրորդ կշռի ընդամենը գինը հավասար է 25581750 /քսանհինգ միլիոն հինգ հարյուր ութսունմեկ հազար յոթ հարյուր հիսուն/ / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*56650246 * 45,03717209% =25513668 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 68082 /վաթսունութ հազար ութսուներկու / ՀՀ դրամի անճշտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի հինգերորդ կշռի ընդամենը գինը հավասար է 1512630 /մեկ միլիոն հինգ հարյուր տասներկու հազար վեց հարյուր երեսուն / ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*56650246 * 2,67052797% =1512860 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 230 /երկու հարյուր երեսունք/ ՀՀ դրամի անճշտություն/:

- *Մասնակցի կողմից ներկայացրած ծավալաթերթ-նախահաշվի վեցերորդ կշռի ընդամենը գինը հավասար է 15479027 /տասնհինգ միլիոն չորս հարյուր յոթանասունինը հազար քսանյոթ/ ՀՀ դրամ:*
- *Մասնակցի կշիռը կիրառված ընդամենը գնի վրա հավասար է՝*

*56650246 * 27,51966886% =15589960 ՀՀ դրամ*

ըստ որի մասնակցի կողմից ներկայացված տվյալ բաժնի կշռի գումարը չի համապատասխանում ընդամենը գնին, առկա է 110933 /մեկ հարյուր տաս հազար ինը հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամի անճշտություն/:

Ելնելով վերոգրյալից մասնակցի հայտը մերժվել է քանի որ մասնակցի կողմից յուրաքաչյուր բաժնի համար նախատեսված կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, մասնավորապես մասնակցի կողմից ներկայացված կշիռը /տոկոսներով/ պետք է

համապատասխանի տվյալ բաժնի ընդանուր գնին, իսկ շեղումները չի կարող ավել կամ պակաս լինել 10 տոկոսից:

Մերժման հիմքում ընկած չեն շեղումների մինչև 10 տոկոս ավել կամ ցածր շեղումները այլ մերժման հիմքում ընկած են մասնակցի թվաբանական սխալները:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2021/80 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Արտաշատի համայնքապետարանի կողմից Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 23, Արազի փողոցի թիվ 39, Շահումյան փողոցի թիվ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.08.2021թ.-ին հայտարարվել է «ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով հրատապ բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն և «Ուսպեխ» ՍՊԸ-ն (կոնսորցիում):

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 23.08.2021թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի և «Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին, բացառությամբ - ծավալաթերթ-նախահաշվի. մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին, թիվ 3-րդ կշռի թիվ երկրորդ տողում կան թվաբանական սխալներ, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին կան թվաբանական սխալներ, թիվ 6-րդ կշռի 11-րդ տողում կան թվաբանական սխալներ/ընդամենը գինը հաշվարկված չէ հազար դրամով/, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առանց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 04 մայիս 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 41-րդ կետը, որոշել է նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել մեկ

աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև նիստի կասեցման ավարտը, շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի 02.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն և «Ուսպեխ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները: Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանում ընդամենը գներին:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 10.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված

ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով սույն հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել սույն հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տաս տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Արտաշատի համայնքապետարանի կողմից Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 23, Արազի փողոցի թիվ 39, Շահումյան փողոցի թիվ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.08.2021թ.-ին հայտարարված «ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով հրատապ բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի և «Ուսպեխ» ՍՊԸ-ի կողմից կազմված հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ. մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանել ընդամենը գներին, թիվ 3-րդ կշռի թիվ երկրորդ տողում կան թվաբանական սխալներ, ընդամենը գինը /բոլոր տողերի գումարը/ չի համապատասխանում նշված ընդամենը գնին կան թվաբանական սխալներ, թիվ 6-րդ կշռի 11-րդ տողում կան թվաբանական սխալներ/ընդամենը գինը հաշվարկված չէ հազար դրամով/, մասնակցի կողմից կշիռները հաշվարկվել են նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել մաքուր արժեքի /առանց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը ևս չի համապատասխանում հրավերի պահանջներին, ինչով պայմանավորված գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել և մասնակցին առաջարկել մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև նիստի կասեցման ավարտը, շտկել արձանագրված անհամապատասխանությունները, սակայն «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ն և «Ուսպեխ» ՍՊԸ-ն չի շտկել անհամապատասխանությունները:

Մասնավորապես՝ ծավալաթերթ-նախահաշվի բոլոր կշիռները չեն համապատասխանել ընդամենը գներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված և «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերջինիս կողմից հայտով ներկայացված՝ հրավերին կցված ծավալաթերթով՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները կիրառվել են մասնակցի առաջարկած նաև 1,5% չնախատեսված ծախսերի վրա, սակայն հրավերով պահանջվել է կշիռները հաշվարկել զուտ արժեքի /առանց ԱԱՀ, չնախատեսված ծախսեր/ վրա, որը չի համապատասխանել հրավերի պահանջներին, ըստ այդմ՝ ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները չեն կիրառվել ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող ածը գալիս է այն եզրահանգման, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության դրույթների խախտում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Արտաշատի համայնքապետարանի կողմից Արտաշատ համայնքի Օգոստոսի 23 փողոցի թիվ 23, Արազի փողոցի թիվ 39, Շահումյան փողոցի թիվ 30 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 06.08.2021թ.-ին հայտարարված «ԱՄԱՀ-ՀԲՄԱՇՁԲ-21 /37» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, կայացնելով «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի և «Ուսպեխ» ՍՊԸ-ի (կոնսորցիում) հայտը ընթացակարգի հրավերով նախատեսված պայմաններին անբավարար գնահատելու մասին որոշում, գործել է իրավաչափ՝ պահպանելով Կարգի 32-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերության պահանջները, որպիսի պայմաններում «ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԿՌ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից 10.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/80 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**